ըէնոգէտ մարդիկ» եւ այդպիսով կազմւում է նահանգական կամ շրջանային դատարանը:

Բացի դատարանի անդամներից՝ շրջանային դատարանն ունի 6 դպիր-ատենաբան եւ 3 գծագիր, որոնց նշանակում է դատարանի նախագահը: Դպիր-ատենաբանները նոյն իրաւունքներն ու պարտականութիւններն ունին նահանգական դատարանում, ինչ որ դպիր-ատենաբանները ծայրագոյն դատարանում (կա):

Դատավարութեան կարգը շրջանային դատարաններում հետեւեալն է. դանդատները գրւում են դպիր-ատենաբաններից մէկն ու մէկի ձեռքով պետական թղթի վրայ — կամ ինչպէս հեղինակն է ասում — «տէրունի թղթի»*) վրայ եւ ներկայացւում դատարանին: Մեղադրեալը—ով ուզում է լինի — պարտաւոր է պատասխանել նրան, անպայման գրաւոր, նոյնպէս պետական թղթի վրայ: Յետոյ երկու անգամ կատարւում են երկու կողմերի «վիճաբանութիւնները», որից յետոյ արդէն դատարանը հանում է իր վճիռը:

Բոլոր քաղաքական, քաղաքացիական եւ այլ խնդիրների վերաբերմամբ շրջանային դատարանի տուած վճիռները ծայրագոյն դատարանի կողմից կարող են բեկման ենթարկուել, բացի քրէական գործերից, որոնց վճիռները վերջնական են: Սակայն մահուան դատապարտուած քրէական յանցաւորը իրաւունք ունի հանր. նախագահից ներումն հայցելու: Այդ դէպքում նրան ժամանակ է տրւում երեք ամիս: Այդ միջոցում նա շղթայակապ նստում է բանտում, մինչեւ որ նրա խնդիրը անցնում է ծայրագոյն դատարանին, այնտեղից էլ հանր. նախագահին, որը ներումը շնորհում է Ազգ. Ժողովի համաձայնութեամբ: Եթէ երեք ամսուան ընթացքում ներումը շնորհուեց, մահապարտը ազատ է արձակւում. հակառակ դէպքում կամ հանր. նախագահից պատասխան չստանալու դէպքում մահուան պատիժն անմիջապէս ի կատար է ածւում. իսկ ներման դէպքում պաշտօնեան այլեւս չի կարող կրկին պաշտօն ստանալ, եթէ Ազ. Ժողովը նրան չվերականգնի իր իրաւունքների մէջ (ճհա, միգ, միդ):

Թէ՛ շրջանային եւ թէ՛ ծայրագոյն դատարանում վճիռները կայացւում են ձայների պարզ մեծամասնութեամբ (մխզ) եւ յայտարարւում են նախագահի կամ «մայր» դատաւորի կողմից, որը ունի երկու ձայն (մխդ, մխե): Միայն քրէական գործերի վճիռները շրջանային դատարանում — ինչպէս տեսանք — յայտարարւում են նահանգի իշխանի կողմից:

Շրջանային դատարանը գործում է նստաշրջաններով, իսկ մանր եւ ընթացիկ գործերի համար անդամներից իւրաքանչիւրը ամսէ-ամիս հերթապահութիւն են անում եւ կոչւում են ամսէն դատաւոր (յծդ, յծե): Նստաշրջանների ժամանակները ճշդորոշուած չեն, բացի քրէական գործերից, որոնց ժամանակները սահմանուած են — մարտ 21, յունիս 21, սեպտ. 21 եւ դեկտ. 21, նստաշրջանների տեւողութիւնը թողնելով դատաւորներին եւ գործերի շատութեանը (միբ):

Շատ հետաքրքրական է մասնաւորապէս քրէական դատավարութիւնը, որը կատարուել կարող է միմիայն նահանգական քաղաքներում, որովհետեւ նահանգի իշխանը անպայմա նօրէն ներկայ պիտի գտնուի դատավարութեանը (շդ): Դատից 5 օր առաջ, եթէ դատապարտեալը մարդասպան է, նրան ազդարարւում է ընտրել 12 մարդ՝ իրան դատելու համար — ինչ ազգից ուզում է լինի, միայն իրեն մերձաւոր ազգական չլինին: Դատարանի կողմից էլ ընտրւում են 94 հոգի «բարեգործ եւ համբաւաւոր» մարդիկ, որոնցից 70 հոգին «վասն որոնելոյ մաքրութիւն եւ կամ աղտեղութիւն մեղաւորի», իսկ մնացած 24 հոգին, որոնցից 12-ը անպայման դատապարտեալի կողմից ընտրուած, յանցաւորին դատելու համար են, նման մեր եղրուեալ ատենակալներին եւ կոչւում են «դատողք» (շզ, շէ):

Դատի օրը իշխանը իր խորհրդակիցներով, մի դունդ զօրքով եւ երկու դրօշակով գընում է դատարան եւ բաղմում իրեն յատկաց-

*) Հայաստանում բոլոր պաշտօնական գործառնութիւնները — պաշտօնի թուղթ, մուրհակ, գնումների վաւերաթղթեր եւն. — գրւում են անպայմանօրէն պետական թղթի վրայ, որի նշանն է «գառն մի դրօշակաւ» (ճլթ):